«ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԵՎ ««ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի ՀՕ-180-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Ազգային ժողովի պատգամավորների կամ խմբակցությունների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվող օրենքների կամ Ազգային ժողովի որոշումների նախագծերի հանրային քննարկման իրականացման կարգը սահմանվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով:»:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝

1) «ներքին» բառից հետո լրացնել «(լոկալ)» բառը.

2) «աշխատանքային» բառից հետո լրացնել «,քաղաքացիաիրավական» բառը:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «Օրենսդրական» բառը փոխարինել «Նորմատիվ իրավական» բառերով.

2) լրացնել 1.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ՝

«1.1.Հանրային քննարկման ենթակա չեն նաև ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը, ինչպես նաև ռազմական կամ արտակարգ դրության պայմաններում սահմանափակումների կիրառմանը և միջոցառումների իրականացմանն ուղղված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը:».

3) 2-րդ մասից հանել «նորմատիվ» բառը:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությունում (այսուհետ՝ նախարարություն)» բառերը փոխարինել «արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության (այսուհետ՝ նախարարություն) իրավական ակտերի փորձաքննության գործակալության կողմից» բառերով.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«3.Օրենքի նախագծերը պարտադիր ենթակա են փորձաքննության, բացառությամբ միջազգային պայմանագրի վավերացման (դրան միանալու) մասին օրենքի նախագծի: Այլ նորմատիվ իրավական ակտերը, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսվածների, կարող են ուղարկվել փորձաքննության ակտը փորձաքննության ուղարկելու իրավասություն ունեցող մարմնի պատճառաբանված գրությամբ, որով հիմնավորվում է փորձաքննության անհրաժեշտությունը:».

3) 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածի վերնագրից հանել «պարտադիր» բառը:

Հոդված 6. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Նորմատիվ իրավական ակտի լեզուն պետք է լինի պարզ, հստակ և մատչելի:»:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Կետերը համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք բաժանվում են տեքստից միջակետով: Ենթակետերը՝ համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք բաժանվում են տեքստից փակագծով: Պարբերությունները համարակալվում են հայերեն փոքրատառերով, որոնք բաժանվում են տեքստից միջակետով:»:

Հոդված 8.Օրենքի 18-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«5. Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը: Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս նշվում է օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:».

2) 6-րդ մասից հանել «այլ» բառը:

Հոդված 9.Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Այլ իրավական ակտերում ակտի բնույթի մասին նշումը կատարվում է «Ա»՝ անհատական իրավական ակտի դեպքում, «Լ»՝ ներքին (լոկալ) իրավական ակտի դեպքում:»:

Հոդված 10.Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասում **«**արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարը» բառերը փոխարինել «Կառավարության կողմից սահմանված պաշտոնական թարգմանության գործառույթ կատարող կազմակերպության ղեկավարը» բառերով:

Հոդված 11.Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ներքին իրավական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, եթե դրանով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ, բացառությամբ ակտերի, որոնք պարունակում են պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք:»:

Հոդված 12.Օրենքի 24-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 24. Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի նորմատիվ իրավական բնույթի որոշումները**

1.Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի նորմատիվ իրավական բնույթի որոշումները, «Եվրասիական տնտեսական միության մասին» միջազգային պայմանագրին համապատասխան, Հայաստանի Հանրապետության տարածքում ենթակա են անմիջական կիրառության:

2. Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի նորմատիվ բնույթի որոշումները, Հայաստանի Հանրապետության՝ որպես Եվրասիական տնտեսական միության անդամ պետության կողմից ստացվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, Կառավարության կողմից սահմանված իրավասու մարմնի կողմից ուղարկվում են թարգմանության: Թարգմանության համար նախատեսված ժամկետը չի կարող գերազանցել ակտի ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:
3. Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի նորմատիվ բնույթի որոշումները թարգմանվելուց հետո Կառավարության կողմից սահմանված իրավասու մարմնի կողմից ուղարկվում են հրապարակման:

4.Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի նորմատիվ բնույթի որոշումները թարգմանության ուղարկելու, դրանց թարգմանության, հրապարակման ուղարկելու և հրապարակման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 13.Օրենքի 25-րդ հոդվածը՝

1) լրացնել 3.1-ին մասով հետևյալ բովանդակությամբ.

«3.1.Միասնական կայքում հրապարակվելուն զուգահեռ նորմատիվ իրավական ակտերը հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի տեղեկագիր», «Համայնքի իրավական ակտերի տեղեկագիր» և «Երևանի իրավական ակտերի տեղեկագիր» պարբերականներում հրատարակվելու միջոցով:».

2) 4-րդ մասում «հրապարակումն» բառը փոխարինել «հրապարակումը և հրատարակումն» բառերով.

3) 6-րդ մասում «և պաշտոնական ինկորպորացիայի կարգը» բառերը փոխարինել «,պաշտոնական ինկորպորացիայի և տեղեկագրերում հրատարակման կարգերը» բառերով.

4) լրացնել 7-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.Հրապարակման միասնական կայքում պաշտոնապես հրապարակված նորմատիվ իրավական ակտի տեքստի և նույն ակտի՝ առաջին անգամ սույն հոդվածի 3.1-ին մասով սահմանված պարբերականում հրատարակված տեքստի բովանդակությունների միջև անհամապատասխանության դեպքում որպես առաջնային աղբյուր ընդունվում է պարբերականում հրատարակված տեքստը:»:

Հոդված 14.Օրենքի 6-րդ գլխի վերնագրից հանել *«ԵՎ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ»* բառերը:

Հոդված 15. Օրենքի 36-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով՝

«3) նորմատիվ իրավական ակտը չեղյալ ճանաչվելու դեպքում:»:

Հոդված 16.Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 38.1 հոդվածով՝

«**38.1 Նորմատիվ իրավալան ակտը չեղյալ ճանաչելը**

1. Նորմատիվ իրավական ակտը չեղյալ է ճանաչվում իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտով, եթե այլևս նպատակահարմար չէ ընդունված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ակտի կիրառումը: Նորմատիվ իրավական ակտը չեղյալ է ճանաչվում ընդունման պահից:»:

Հոդված 17. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «վաղ» բառը փոխարինել «ուշ» բառով:

Հոդված 18. Օրենքի 42-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասի «մարմինները» բառից հետո լրացնել «,բացառությամբ Ազգային ժողովի կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերի։» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1 մասով.

«4.1. Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի, քաղաքացիական, քրեական, վարչական դատավարության օրենսգրքերի, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում չի տրամադրվում։»:

Հոդված 19. Անցումային դրույթներ

1. Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի նորմատիվ բնույթի որոշումները թարգմանության ուղարկելու, դրանց թարգմանության, հրապարակման ուղարկելու և հրապարակման կարգը սահմանելու մասին Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:
2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում ապահովվում է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն ընդունված Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի նորմատիվ բնույթի որոշումների թարգմանությունը և հրապարակումը՝ Կառավարության որոշմանը համապատասխան:
3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Կառավարության նորմատիվ որոշումները, որոնցով գործողության մեջ են դրվել Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի նորմատիվ բնույթի որոշումները, պահպանում են իրենց ուժը:

Հոդված 20. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 67-րդ հոդվածում լրացնել 3-րդ մասը հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքում՝ նախաձեռնության հեղինակը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է օրենքի նախագծի հանրային քննարկումը: Հանրային քննարկման կարգը սահմանվում է Աշխատակարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը: